ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Համաքրիստոնեական չորրորդ խաղաղության կոնֆերանսը տեղի ունեցավ 1971 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը Պրագայի «Ինտերնացիոնալ» հյուրանոցում: Նրան մասնակցում էին աշխարհի ամենատարբեր երկրների եկեղեցիների 236 պատգամավոր և շուրջ 100 հյուրեր, դիտորդներ, լրագրողներ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին, հանուն Մայր Աթոռի, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ՝ Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը և Հովհաննես Թոփուզյանը:

Խաղաղության կոնֆերանսի աշխատանքները սկսվեցին սեպտեմբերի 30-ին Նիգերիայի եպիսկոպոս Ֆեստուս Սեգընի աղոթքով և ընթացան «Քրիստոնյաների պատասխանատվությունն ավելի լավ աշխարհի համար» բնաբանով:

Երկրորդ և երրորդ լիագումար նիստերում լսվեցին քրիստոնյաների խաղաղության շարժման նախագահի պաշտոնակատար միտրոպոլիտ Նիկոդիմի, գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Յանուս Մակովսկու, փոխ-նախագահներ դոկտ. Հերբերտ Մոխալսկու և հոգևոր հովիվ Ռ. Անդրիմանժատոյի զեկուցումները:

Առաջին զեկուցումը («Քրիստոնյաների պատասխանատվությունը ավելի լավ աշխարհի համար») նվիրված էր չորրորդ կոնֆերանսի աշխատանքների հիմք հանդիսացող աստվածաբանական գլխավոր սկզբունքների բնութագրմանը, երկրորդը՝ քրիստոնյաների խաղաղության շարժման ղեկավար օրգանների 1968—1971 թվականների գործունեությանը, երրորդը («Միջազգային իրադրությունը քրիստոնյաների խաղաղության կոնֆերանսի գնահատմամբ») նվիրված էր Վիետնամի, Մերձավոր Արևելքի, Հարավային Աֆրիկայի, Պակիստանի և Եվրոպայի հարցերի վերլուծությանը և դրանց խաղաղ կարգավորման ուղիների որոնմանը: Այդ շարքի վերջին զեկուցողը հանգամանորեն քննարկեց զարգացած և զարգացող երկրների փոխհարաբերության մի շարք էական հարցեր: Այնուհետև մտքերի աշխույժ փոխանակություն ծավալվեց զեկուցումներում արծարծված հարցերի շուրջ:

Հոկտեմբերի 1-ի լիագումար նիստում լսվեցին վեց զեկուցումներ՝ «Ազատագրական ճակատի վրա», «Պայքար ռասիզմի դեմ», «Մերձավոր Արևելքի խաղաղությունը», «Արդարություն Լատինական Ամերիկային», «Վիետնամը վիետնամցիներին» և «Եվրոպայի անվտանգությունը»:

Նույն օրվա երեկոյան սկսվեց աշխատանքը տարբեր հարցերի գծով խմբերում:

Գործում էին հետևյալ հինգ խմբերը.

ա) Աստվածաբանական հարցեր,
բ) Միջազգային հարցեր,
գ) Տնտեսություն և քաղաքականություն,
դ) Երիտասարդություն,
ե) Ռասիզմ:

Հայ եկեղեցու ներկայացուցիչներից տ. Պարգև եպիսկոպոսը մասնակցում էր առաջին, իսկ Հովհաննես Թոփուզյանը՝ երկրորդ խմբի աշխատանքներին՝ պատգամավորների հանգամանքով:

Ընդհանուր վերնագրերի ներքո քննարկվեցին և բանաձևեր հանվեցին միջազգային ամենահրատապ հարցերի վերաբերյալ: Այդ բանաձևերը, որոշ ուղղումներով, հիմք դարձան չորրորդ կոնֆերանսի ընդունած գլխավոր փաստաթղթին:

Հոկտեմբերի 3-ի լիագումար նիստում ընդունվեցին քրիստոնյաների խաղաղության շարժման ղեկավար օրգանները՝ աշխատանքը շարունակող կոմիտեն, աշխատանքային կոմիտեն և շարժման նախագահը: Նախագահ ընտրվեց միտրոպոլիտ Նիկոդիմը: Աշխատանքը շարունակող կոմիտեի անդամ ընտրվեց տ. Պարգև եպս. Գևորգյանը:

Հաջորդ օրը տեղի ունեցավ զույգ կոմիտեների միացյալ նիստը, որտեղ ընտրվեցին քրիստոնյաների խաղաղության շարժման գլխավոր քարտուղար (դոկտ. Կարոլի Տոթ՝ Հունգարիայից), փոխ-նախագահներ և միջազգային հարցերի գծով քարտուղար:

Համաքրիստոնեական չորրորդ խաղաղության կոնֆերանսը ոչ միայն հաղթահարեց 1969—1970 թվականների ներքին ճգնաժամի հետևանքները, այլև նպաստեց խաղաղության տենչով տոգորված, բայց քաղաքական տարբեր համոզմունքներ ունեցող մարդկանց միավորման ու համագործակցության ամրապնդմանը՝ հանուն «ավելի լավ աշխարհի»: